«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն
Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, ֆաքս: (37410) 581102, E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

---

04.08.2021թ.

Արմավիրի մարզպետ
Պարոն Համբարձում Մաթևոսյանին

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

Հարգելի պարոն *Մաթևոսյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6, 9, 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին:

1. 2019-2021թթ. Արմավիրի մարզում հանրակրթական ուսումնական հաստատություններից քանի՞ երեխա է դուրս մնացել, որ դասարանում սովորող երեխաներն են դուրս մնացել և ինչ պատճառով: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարիների և համայնքների՝ նշելով դասարանը, պատճառը (օրինակ՝ սոցիալական, առողջական և այլն):***

2. Նշված ժամանակահատվածում դպրոցից դուրս մնացած քանի՞ երեխա է հաշվառվել ոստիկանության անչափահասների բաժնում և ինչ պատճառով: ***Տեղեկատվությունը տրամադրել ըստ տարների՝ նշելով համայնքը, որտեղ ապրում է երեխան, ինչպես նաև հաշվառման պատճառը:***

3. Եթե կան հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաներ, ովքեր դուրս են մնացել հանրակրթական ուսումնական հաստատություններից, արդյո՞ք նրանց բնակավայրի դպրոցները հարմարեցված են նման երեխաների համար: Եթե ոչ, ապա ի՞նչ քայլեր է իրականացվում այդ ուղղությամբ:

4. Մարզպետարանն ի՞նչ քայլեր է ձեռնարկել դպրոցից դուրս մնացած երեխաներին ուսումնական հաստատություններ վերադարձնելու ուղղությամբ:

Կանխավ շնորհակալություն *Դիմող՝ Գ. Բալասանյան*